

Որքան էլ դա անհավանական թվա՝ կաթնասունները լինելով ողնաշարավոր կենդանիներից առավել զարգացած և լայն տարածված դաս, այսօր համեմատած մնացած դասերի (ծկների, երկկենցաղների, սողունների, թռչունների) ներկայացուցիչների հետ թույլ, երբեմն ընդհանրապես հետազոտված չեն: Դա վերաբերում է Հայաստանի մասնավորապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վայրի կաթնասուններին ևս (2,5,6):

Մինչև օրս բացակայում է ամփոփիչ ցանկ, որտեղ ներկայացված լինեն ԼՂՀ կաթնասունները: Առավել ևս դա վերաբերում է նրանց կենսաբանությանը՝ էկոլոգիային, տեղագրությանը, մակաբույծներին, վարքագծին, ակտիվությանը (սեզոնային, օրական), սննդին, բազմացմանը, աճին, զարգացմանը, տեղաշարժմանը, սեզոնային երևույթներին (քոչ, չու) և այլն:

Բացակայում են որևէ տվյալներ կաթնասունների գոտիական տարածվածության բարձունքային փոփոխությունների, թաքստոցների կառուցվածքի, կարիոլոգիական շեղումների, արյան բաղադրության վերաբերյալ և այլն:

Այս և մի շարք այլ հարցերին է նվիրված տվյալ հաղորդումը:

Որպես օբյեկտ ընտրել ենք կաթնասուններից առավել թույլ նկարագրված օղակա միջատների (insectivora) կարգի ներկայացուցիչներից մեկը՝ սովորական ոզնին (*einhacoeuropaeus* L.) (3):

ԼՂՀ-ում այս կենդանուն հնարավոր է հանդիպել համարյա ամենուր, որտեղ կան ջրամբարներ, գետեր, գետակներ, լճեր, այգիներ, անտառներ, պուրակներ և այլն: Նրանք գերադասում են բնակվել միջին գոտում՝ սկսած ծովի մակերևույթից 400-ից մինչև 2300 մետր բարձրության տարածքներում:

Մեր կատարած մորֆոմետրիկ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել հետևյալը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Սովորական ոզնու (*erinaceus europaeus*) որոշ մորֆոմետրիկ ցուցանիշները

		M±m	±δ
1.	Կենդանի քաշը	710±64 /գ/	143 /գ/
2.	Իրանի երկարությունը	224±8.3/մմ/	18.5/մմ/
3.	Գլխի երկարությունը	57,6 ±0,5/մմ/	1,28/մմ/
4.	Գլխի մեծ լայնությունը	31 ±1,16/մմ/	2,6/մմ/
5.	Գլխի փոքր լայնությունը	18,8± 1,75/մմ/	3,92/մմ/
6.	Գլխի խորությունը	28,8 ±0,33/մմ/	0,75/մմ/
7.	Ականջների երկարությունը	20 ±1,3/մմ/	2,9/մմ/
8.	Ականջների լայնությունը	19,2± 1,58/մմ/	3,54/մմ/
9.	Պոչի երկարությունը	28,42± 0,9/մմ/	1,94/մմ/
10.	Թոքերի քաշը	11,9 ±1,29/գ/	2,9/գ/
11.	Լյարդի քաշը	35,2 ±2,14/գ/	4,8/գ/
12.	Փայծաղի քաշը	8,3 ±1,03/գ/	2,31/գ/
13.	Սրտի քաշը	4,42 ±0,077/գ/	0,172/գ/
14.	Երիկամների քաշը	3,88 ±0,24/գ/	0,53/գ/
15.	Սնորձիների քաշը	3,1 ±0,04/գ/	0,09/գ/
16.	Աղիքների երկարությունը	87,7± 2/սմ/	4,6/սմ/

Մարմինը մոխրա-դարչնագույն է՝ տարբեր երանգներով: Փշերի վրայի համեմատաբար մուգ շերտը երբեմն կարող է լինել բաց կամ մուգ մոխրադարչնագույն(Գլխի վերին մասում, ականջների միջև, ունի փոքրիկ մազազուրկ տարածություն /3,7/)

Որովայնի եզրային հատվածները ծածկված են բաց դարձնագույն խոզաստևներով (էգերի մոտ այն մոխրա-սպիտակավուն է): Որովայնի վրա խոզաստեղները նոսր են, իսկ վերջույթների և պոչի վրա՝ հազվադուր:

Բները պատրաստում են խիտ մացառուտներում, թափված տերևների տակ, ընկած ծառերի սնամեջ բներում, հարարմատային կիսափչակներում և այլն: Վարում են մթնաշաղա-գիշերային կյանք, հազվադեպ (տարվա մեղմ ժամկետներին) հայտնվելով օրվա լուսավոր ժամերին:

Ամռանը բներ չեն կառուցում և թաքնվում են պատահական թաքստոցներում:

Բազմացման շրջանը սկսվում է ձմեռվա քնից արթնանալուց անմիջապես հետո: Բազմանում են տարին մեկ անգամ, հղիության տևողությունը 49 օր է: Էգերի կաթնապտուկների քանակը 5 զույգ է, ունենում են 4-8 ծագ:

Զագերը ծնվում են անօգնական՝ կույր, մերկ, փակ լսողական անցքերով: Վառ վարդագույն մաշկի վրա կան բլրակներ, որտեղից ծնվելուց մի քանի ժամ հետո երևում են

սպիտակ, սուր, բայց դեռևս փափուկ փշեր: Աչքերը բացվում են կյանքի 16-րդ օրը /6/ Մայր ծագերին կաթով կերակրում է մեկ, մեկուկես ամիս, սակայն խնամքը ծագերի նկատմամբ շարունակում է մինչև աշուն: Աշնան կեսերից ծագերը լքում են բները և անցնում ինքնուրույն կյանքի: Սեռահասուն են դառնում հաջորդ տարվա գարնանը /4/:

Սովորական ոզնու կերաբաժինը բազմազան է: Այստեղ գերակշռող մասը կազմում են միջատները և նրանց թրթուրները: Նրանց համար սնունդ հանդիսացող միջատների մեջ կան այնպիսի տեսակներ, որոնք մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանն և անտառատնտեսությանը, օրինակ՝ մայիսյան բզեզի թրթուրները, գնայուկները, անզույզ/ տարազույզ/ մետաքսագործները և այլն:

Բացի միջատներից ոզնիները ոչնչացնում են նաև վնասակար կրծողներին: Որոշ չափով վնաս հասցվում միջատակեր և զետնի վրա բնագորող որսորդաարդյունաբերական թռչուններին ձվերը և ձագուկները ոչնչանելով: Երբեմն ուտում են նաև երկկենցաղներ և սողուններ/մողեսներ, օձեր/:

Erinaceus europaeus L. հանդիսանում է իքսոդային տզերի տերը՝ երկարատև պահպանողը և մարդու ու կենդանիների համար վտանգավոր/տուլարեմիայ, տզային պիրոպլազմոզ/ հարուցիչների տարածողը: Ոզնիները համարվում են տզերի համապարփակ տերերը, քանի որ նրանց զարգացման ամբողջ շրջանները անցնում է ոզնու վրա/2,6/:

Մեր տրամադրության տակ գտնվող ամեն մի կենդանուց հավաքել ենք միջին հաշվով 45 ixodes և 10 hyalomma սեռի տզեր:

Մակաբուծական հետազոտություններում, այս ասպարեզում, հայտնի է հատուկ հաշվառման միավոր ոզնի/ժամ/1,6,7/, որը նշանակում է վարակված գոտում շարժվող գոտուց մեկ ժամում հավաքած տզերի քանակը:

Բացի արտաքին մակաբույծներից այս կենդանիներից հավաքել ենք նաև մակաբույծներ: Հերթման ժամանակ մեկ ոզնու ստամոքսից հանել ենք 36, երկրորդից 56, երրորդից 25, կլոր որդեր, որոնք բացակայում են աղիներում: Հադրուքի շրջանի թաղոտ գյուղի մոտակայքի մեկ այլ սովորական ոզնու 12-մատնյա աղիքից հանվել է 15 անհատ ժապավենածև որդեր: Կուտակած ողջ մակաբուծական նյութը որոշման է ուղարկվել ՀԱՍ կենդանաբանության ինստիտուտի ակադեմիկոս Ս.Յ.Մովսիսյանի ղեկավարած լաբորատորիա:

Օգտագործված գրականությունը

1. Агаджанян А.К., Орлов В.И. — Систематика и филогения грызунов и зайцеобразных // Москва — 2000, с. 1-196
2. Даль С.К. — Животный мир Арм. ССР // т.1 позвоночные животные, изд. А.И. Арм. ССР, Ереван-1954, с.15-384
3. Кузнецов Б.А.- Определитель позвоночных животных фауны СССР// Т.3, Млекопитающие, Москва-1975/1981/ с.24-43
4. Մարտիրոսյան Բ.Ա., Պապանյան Ս.Բ. — Հայաստանի վայրի կաթնասունները// Երևան 1983, էջ 15-17

5. Յաւրպետեան Է.Գ. և ուրիշներ – Հայաստանի կենսաբազմազանութիւնը//ռաջին ազգային գեկույց/, Երևան – 1999, էջ 3-160:
6. Соколов В.Е.—Жизнь животных //т.7 Москва 1989, с. 72-74
7. Темботов А.К., Явруян Э.Г. и друг. — Экология млекопитающих горных территорий// изд. “Эльфа”, “Нальчик” — 1997 с.8-180

ԱԻՐԱՔԵՏԻԱՆ Վ. Դ.

ЭКОЛОГИЯ И ПАРАЗИТЫ НАСЕКОМОЯДНЫХ (INSECTIVORA) НКР

Р е з ю м е

Млекопитающие, как это не парадоксально, наиболее слабо исследованный класс позвоночных животных не только НКР, но и всего Закавказья.

В данной работе представлены результаты изучения экологии и паразитов одного из представителей отряда Insectivora-Обыкновенного ежа (*Erinaceus Europeus L.*)

HAYRAPETIAN V. T

ECOLOGY AND PARASITES OF INSECTIVORA OF NKR

S u m m a r y

Mammals, as it's not paradoxical, most poorly investigated class of Vertebras of animals not only in NKR, but also in all Transcaucasia.

In the given work are submitted the results of study of ecology and parasites of one of the representatives of group Insectivora-Ordinary Hedgehog (*Erinaseus Europaeus L.*)